



ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ _____ -Ա « ____ » _____ 2023 թ.

ք.Երևան

**«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԶԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ «ԿԱՐԵՆ
ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 20-ի «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորման ձևով «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» թիվ 1627-Ա որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 30-Լ հրամանով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 11-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

2. Հաստատել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

3. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ապահովել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցման և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները:

4. Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետին՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո երկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղ. Երևան, Կենտրոն, Ծիծեռնակաբերդի զբոսայգում գտնվող անշարժ գույքի՝ 46335.7 քառ. մետր մարզամշակութային կենտրոն, 40.0 քառ. մետր և 50.0 քառ. մետր օժանդակ շինություններ, 2800.0 քառ. մետր ջրավազան և աստիճաններ, 3851.3 քառ. մետր ջրավազան և դրանց զբաղեցրած, օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ 9.457789 հա հողամաս (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N23092019-01-0009 վկայական) (այսուհետ՝ Անշարժ գույք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1627-Ա որոշման N2 հավելվածի շարժական գույքի (այսուհետ՝ Շարժական գույք) հանձնումը «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը:

5. Պետական գույքի կառավարման կոմիտեի պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի պետին՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո երկամսյա ժամկետում ապահովել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության հետ Անշարժ գույքի և Շարժական գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանագրերի կնքումը, Անշարժ գույքի տրամադրման պայմանագրում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

6. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Կարեն Ղազարյանին (նույնականացման քարտ N007315401, տրված 14.01.2016թ., 011-ի կողմից)՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչև սահմանված կարգով պաշտոնի համալրումը:

7. Պետական գույքի կառավարման կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո 3-օրյա ժամկետում ապահովել բաժնետիրական

ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի հետ աշխատանքային
պայմանագրի կնքումը:

25.01.2023

X 

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ